Բարև՛, բարեկա՛մս,

Անունս Գոհար է: Ես 18 տարեկան եմ, ապրում եմ Հայաստանում: Քեզ հպարտությամբ ձեռք եմ մեկնում. ուզում եմ խոսել խաղաղության վերահաստատման մասին:

Մենք երկուսս էլ ապրում ենք բարդ իրավիճակում, երբ ամեն օր լսում ենք սահմանի ցավալի դեպքերի մասին: Իհարկե, ոչ մեկս էլ դա չենք ցանկանում, բոլորս էլ մարդ ենք և ուզում ենք ապրել խաղաղ երկնքի տակ: Մենք ուզում ենք հասնել խաղաղության, իսկ որո՞նք են դեպի խաղաղություն տանող ճանապարհները: Մենք չենք կարող անվրդով ու անմասն մնալ այդ իրադարձություններից, երբ գիտենք, որ մեր տարիքի երիտասարդներն են փորձում պահել այդ խաղաղությունը: Բայց, ցավոք, դա բավարար չէ: Խաղաղությունը, իհարկե, պետք է լինի երկխոսությամբ: Ես համոզված եմ՝ ինչպես ես, այնպես էլ դու չես ցանկանում պատերազմ, սիրելի՛ ընկեր:

Իմ խաղաղասե՛ր ընկեր, ե՛կ խաղաղություն սփռենք ողջ աշխարհում և խաղաղության յոթներանգ ծիածան կապենք մեր երկրների երկնակամարում: Գիտե՞ս, ես նույնիսկ պատկերացրել եմ՝ ինչ կլինի խաղաղության հաստատումից հետո.

Անամպ երկինք,

Խինդ ու ուրախություն,

Չոր աչքեր,

Խաղաղ սիրտ ու ուրախ մանկություն,

Որդուն տագնապով չսպասող մայր և անխռով քուն, Խաղաղ սահմաններ, զինվոր, որի սրտում տագնապ չկա, Եվ վերջապես՝ արարում ու բարգավաճում:

Մենք՝ ես ու դու, գիտակցում ենք պատերազմից բխող արհավիրքները, այդպես չէ՞. խեղված ճակատագրեր, կորսված կյանքեր, մի՞թե սա է մեզ հարկավոր…

Ուրեմն, սիրելի՛ս, ե՛կ մի պահ շեղվենք, մի կո՛ղմ թողնենք ամեն բան, դու՛ս գանք այն օղակի միջից, որն արդեն քանի տարի է՝ մեզ ամուր իր մեջ է պահում: Ե՛կ ձեռք ձեռքի տանք, կոտրենք մեր մեջ այն կարծրատիպը, որ անհնար կլինի շփվել սովորական մարդկանց պես: Ե՛կ ընկերներ դառնանք: Դառնանք այն շարժիչ ուժը, որը կփոխի մեզ ու մեր երկրները: Սիրելի՛ս, մենք ենք մեր վաղվա օրն ու ապագան: Արի՛ ապրենք կողք–կողքի ու սիրով: Արի՛ քայլ անենք, որ այն շարժառիթ դառնա, այլ ոչ թե շարժառիթը երևան գա, և այդ քայլը հետո արվի: Հասկացի՛ր, բարեկա՛մս, լավագույն ստեղծագործությունը անկախ ու հանգիստ ապրելն է երկրի վրա:

Արի՛ միշտ հիշենք, որ սխալը սխալ է այնքան ժամանակ, քանի դեռ այն չենք ուղղել: Արի՛ փորձենք սովորել մեր սխալներից: Զիջենք միմյանց, որ երջանիկ լինենք: Սիրենք միմյանց, որովհետև չկա աշխարհում ավելի գեղեցիկ զգացմունք, քան մարդկային սերը: Ես սիրում եմ իմ երկիրը, ինչպես դու քո հայրենիքն ես սիրում: Ես ուզում եմ քեզ տեսնել այստեղ: Նորի՛ց կարդա անունս. ես Գոհարն եմ, արի՛ ու գտիր ինձ:

Քո հայաստանցի ընկեր կամ մտերիմ ընկեր՝ Գոհար, ինչպես որ կցանկանաս…